ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ Նարեկ Սարգսյանի՝ 2017թվականի նոյեմբերի 8-ից 10-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում կայացած Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) Բնակարանային և հողի կառավարման կոմիտեի նախարարների մակարդակով 78-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝ Նարեկ Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահ

3.Գործուղման վայրը և ժամկետը՝ Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2017 թվականի նոյեմբերի 8-ից 10-ը

4.Հրավիրող կողմը՝ Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) Բնակարանային և հողի կառավարման կոմիտեն

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Նստաշրջանի նպատակն էր՝ ամփոփել այնպիսի միջազգային համաձայնագրերի իրականացման ձեռքբերումները և մարտահրավերները, ինչպիսիք են Կայուն Զարգացման Օրակարգը՝ մինչև 2030 թվականը, Քաղաքների զարգացման նոր օրակարգը և Կայուն բնակարանային տնտեսության մասին ՄԱԿ-ի Ժնևյան խարտիան:

Նստաշրջանի 2-րդ օրը կայացել է Նախարարական համաժողովը, որը նվիրված էր ՄԱԿ ԵՏՀ-ի բնակարանային և հողի կառավարման կոմիտեի հիմնադրման 70-ամյակին:

6. Քննարկված թեմաները՝

Նստաշրջանում առանցքային թեմաները հետևյալն էին՝ Կայուն Զարգացման Օրակարգը՝ մինչև 2030 թվականը, Քաղաքների զարգացման նոր օրակարգը և Կայուն բնակարանային տնտեսության մասին ՄԱԿ-ի Ժնևյան խարտիան:

7.Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

Նստաշրջանի ժամանակ ներկայացրել եմ մեր երկրում մատչելի բնակարանների հասանելիության մասով իրականացված աշխատանքները, առկա մարտահրավերները և դրանց լուծման ուղիները:

Նախարարական համաժողովն ամփոփվել է կայուն բնակարանային տնտեսության և քաղաքային զարգացման մասին Ժնևի նախարարական հռչակագրի ստորագրմամբ:

Ժնևում հանդիպել եմ նաև շվեյցարաբնակ գործարար Վարդան Սրմաքեշի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են գործարարի կողմից Հայաստանում իրականացվելիք մի շարք ներդրումային ծրագրերին առնչվող խնդիրներ, մասնավորապես՝ «Հին Երևան» և Երևան քաղաքում միջին հարկայնության բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքը:

8. Գործուղվող - Նարեկ Սարգսյան

9. Սպորագրությունը, ամսաթիվը – ***14.11.2017 թվական***